



# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 6059-Ա

« 29 օգոստոսի 2012 թ. »

## ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱԾԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N 919-Ն որոշման կատարումն ապահովելու նպատակով՝

1. Հաստատել՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում Երևան քաղաքի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը՝ համաձայն N 1 հավելվածի /իր հավելվածներով/.

2) ժամանակավոր կացարանի անձնակազմի գործառնական պարտականությունները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) տարահանման միջոցառումների ապահովման պլանը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) բնակչությանը տարահանման վայրերի և երթուղիների մասին տեղեկացման թերթիկի օրինակելի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) կամավորների ներգրավման ուղեցույցը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) տարահանման վարժանքների անցկացման մեթոդիկան՝ համաձայն N 6 հավելվածի.

7) տարահանման հիմնական երթուղիների ցանկը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) ժամանակավոր կացարանների ծավալման համար նախատեսվող տարածքների ցանկը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) Հանդերձանքով, սննդով, տեխնիկայով, վառելիքաքսուկային և այլ նյութական միջոցներով ապահովման հայտի օրինակելի ձևը՝ համաձայն N 9 հավելվածի:

2. Բոլոր հիմնարկ ձեռնարկությունների, կազմակերպությունների, ընկերությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարներին՝

1) 12-ամսյա ժամկետում մշակել տարահանման կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր և համաձայնեցնել Երևան քաղաքի փրկարարական վարչության հետ,

2) առնվազն տարին մեկ անգամ անցկացնել տարահանման վարժանքներ,

3) մշտապես համագործակցելով վարչական շրջանների ղեկավարների հետ՝ իրականացնել տարահանման ապահովումը,

4) միջոցառումների լիարժեք իրականացման համար կազմել անհրաժեշտ միջոցների հայտեր և ներկայացնել վարչական շրջանների ղեկավարներին:

3. Վտանգավոր օբյեկտների տնօրեններին՝ վերականգնել և պատրաստականության վիճակում պահել բնակչության ազդարարման միջոցները:

4. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝

1) կազմակերպություններից ներկայացված հայտերի հիման վրա կազմել ամփոփ հայտ՝ անհրաժեշտ միջոցների ձեռքբերման, կուտակման և պահպանման համար,

2) անօթևան բնակչության համար, սեփական որոշմամբ, ստեղծել լրացուցիչ տեղաբաշխման վայրեր՝ համաձայն N 10 հավելվածի և 1 ամսվա ընթացքում փաստաթղթերը ներկայացնել հաստատման տարահանման հանձնաժողովի նախագահին,

3) բնակչության տեղեկացման թերթիկների միջոցով ապահովել տարահանման վայրերի վերաբերյալ տեղեկատվությունը,

4) սեփական որոշմամբ սահմանել երկրորդական երթուղիների ցանկը՝ ճանապարհների 8 և ավելի մետր լայնության սկզբունքով և մշտապես իրականացնել տարահանման երթուղիների բարելավում,

5) անհրաժեշտության դեպքում իրականացնել տարահանման երթուղիների երկայնքով շենքերի ամրացում,

6) նախապատրաստել տարահանման վայրերի համար բաց տարածքներ,

7) իրականացնել տարահանման վայրերի բարելավման աշխատանքներ:

5. Տարահանման հանձնաժողովի նախագահին՝ կազմակերպել կամավորների ներգրավումը և ստեղծել պատասխանատու մարմին, կամավորների համակարգման համար:

6. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետին և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետին՝

1) ապահովել լրացուցիչ տարահանման կետերն անձնակազմով,

2) կազմակերպել անձնակազմի ուսուցում:

7. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, շինարարության և բարեկարգման վարչության պետերին, «Երբաղույս» ՓԲԸ-ի տնօրենին՝

1) ժամանակավոր կացարանների վայրերն ապահովել կենսաապահովման անհրաժեշտ իրերով,

2) տարահանման երթուղիներն ապահովել շուրջօրյա լուսավորությամբ և անցանելիությամբ:

8. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետին՝

1) ապահովել տրանսպորտի տրամադրման վերաբերյալ համաձայնագրերի կնքում՝ տրանսպորտային ընկերությունների հետ,

2) մշտական հսկողություն սահմանել տարահանման երթուղիների շահագործման նկատմամբ:

9. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետին՝

1) ապահովել համապատասխան համաձայնագրերի կնքում՝ առևտրային և արտադրական ընկերությունների հետ,

2) ապահովել «Միայն օգտագործվելու դեպքում վճարելու» քաղաքականությունը,

3) ապահովել պաշարների հոսքը՝ տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման համար նախատեսված սննդամթերքի, նյութատեխնիկական, ջրի և այլ պաշարների անխափան մատակարարման, պահպանման ժամկետներից ելնելով շրջանառության կազմակերպումն ու համալրումը,

4) որպես պահեստավորման վայրեր օգտագործել տարահանված բնակչության տեղաբաշխման կետերը՝ պատասխանատու նշանակելով տվյալ կետի ղեկավարին,

5) մշակել պահեստավորման վայրերում անհրաժեշտ սննդամթերքի ցուցակը և քանակը:

10. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետին՝ նախապատրաստել վայրեր ժամանակավոր կացարանների ծավալման համար:

11. Երևանի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն ՊՓԲԸ-ի տնօրենին՝ ստեղծել տարահանման էլեկտրոնային քարտեզ և պարբերաբար թարմացնել:

12. Առաջարկել՝

1) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝

ա) իրականացնել տարահանման մարմինների պետերի մշտական ուսուցում.

բ) նախապատրաստել պաշտոնատար անձանց խումբ և ելնելով տարածքային առանձնահատկություններից նշանակել պատասխանատուներ՝ «ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության միջոցով, արտակարգ իրավիճակներում վնասված շենք-շինությունների անվտանգության գնահատման համար:

2) «Արմենտել» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝

ա) ապահովել կապը տարահանման մարմինների միջև.

բ) ղեկավար կազմին ընդգրկել ազդարարման ցուցակներում:

3) ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի «Արտակարգ իրավիճակներ» բաժնում նախատեսել ժամեր՝ տարահանման միջոցառումների ուսումնասիրման և գործնական իրականացման համար:

13. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Երևան քաղաքի փրկարարական վարչության պետին՝

1) տարին մեկ անգամ սույն որոշման համապատասխան հավելվածներում կատարել ճշգրտումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նախապատրաստել փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ.

2) կազմակերպել բնակչության անհատական պահեստավորումների խրախուսում.


3) կազմակերպել բնակչության ուսուցում:

14. Սույն որոշման կատարման կազմակերպումը դնել Երևան քաղաքի փրկարարական վարչության պետ, փ/ձ գնդապետ Մ. Ղազարյանի վրա:

15. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Երևանի տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

16. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ